


կարծել և կասկածել նոյն են, այսինքն կասկածելն է կայծ—կայծ—ել ձեռն սղեալը։ Ասկա ինչպէս կրնայ հաշտուիլ միւս հաւաստումին հետ թէ կարծիք և կեղծիք նոյն են։ Փանի որ կեղծին բունն է կեղ, ալ ինչպէս կրնայ կեղը կայծին կամ կարծին հետ նոյնանալ ձայնաբանօրէն և նշանակօրէն։ Կեղեւէն կայծին ինչպէս կ'երթայ մարդկային մտածութիւնը։ Ասիկա անկարելի է։ Բայց կայծէն կարծիքի բնականօրէն կ'երթայ. վասն զի կայծը պզտիկ կամ վաղանցիկ լոյս մ'է, որ բաները շատ պայծառ և ստույգ կերպով չի ցուցնէր մեզի, և չի թողուր որ հաստատ համոզում և աներկայիչի տեղեկութիւն մը կազմենք նշմարուած առարկային կամ շարժումին վրայ, այլ միայն կայծիք մը, կարծիք մը կ'ունենանք, կը նշմարենք։

Լեզուաբանութիւնը իմաստասիրութիւն մ'ունի, կամ պէտք է որ ունենայ։

ՏԵՐԹ. Մ. ՍՄԱՅՍ ԳԱՐԵԻԷԼԵԱՆ

Նիւ Եորք



## ԱՌ ՎԵՐ. Զ. Ն. ԱՆԴՐԻԿԵԱՆ

« Կարծիք, կեղծիք » բառերուն վրայ Բազմալէպի մէջ բացուած վէճը վերջաւաւ մօտ չերևար զեռ, և ինչպէս կ'ըսէր, «այս երկու բառերուն շուրջը արդէն պզտիկ զբաղանդութիւն մը կազմուած է»։

Անոնք Հայ լեզուի ամենադիւրին դժուարութիւններէն են սակայն և լեզուին կազմական օրէնքներուն և ներքին և սովորական հանգամանքներուն վրայ փոքր ինչ ուշադիր հայեացք մը կը բաւէ անոնց տեղը՝ դիւրը և լինելովժանն կերպը արտայայտելու։ Եւ ասոնք շատոնց շարադասած եմ իմ պատրաստած Համեմատական աշխատութեանս մէջ և չէի ալ ուզեր միջամտել ձեր ներկայ վիճաբանու-

թեանը եթէ համաձայնութիւնը կատարեալ տեսնէի։ Բայց որովհետեւ չէ, հարկ կը համարեմ իմ հայեացքներս ալ ներկայացնել ձեզ, եթէ թոյլ կու տաք։

Եւ նախ եզրակացութենէն սկսելով ըսեմ որ

Կարծիք, կեղծիք, կասկած

Երեքն ալ նոյն են, «կարծ» արմատի ծաւալումներ, կրկնումներ և փոփոխութիւններ որոնց օրինակները չեն պակսիր լեզուին մէջ։ Ուրեմն ձեր վերջին եզրակացութիւնն է ճիշդը որուն հասեր եմ ես ալ իմ հետազօտութեանցս մէջ։ Եւ ահա թէ ինչպէս.

Դիտած եմ որ հայերէնի մէջ կրկնակ բառերը մասնաւոր օրէնքներու կը հպատակին և որոշ դասակարգեր կը կազմեն որոնց մի քանի գլխաւորները նշանակած եմ։

Այսպէս, զոր օրինակ.

Ա. ԴԱՍ

Այն կրկնակներն են որոնց երկու եզրերն ալ ամբողջ են և երբեմն զօդերով և երբեմն առանց ո՛ր և է միջնորդի զուգուած.

|             |              |              |
|-------------|--------------|--------------|
| այլևայլ     | ծերծեք       | շողոյ(եմ)    |
| ափափ(այ)    | ծործոր       | շրշրջ(եմ)    |
| յաղրաղ(այք) | կափկափ(եմ)   | ոստոստ(եւմ)  |
| յնկյնկ      | կերկեր       | լարալար      |
| զոնչազոնչ   | կէշկէշ(եմ)   | լարալար(անք) |
| գոշգոշ(ամ)  | կծռակիծ      | պատկպատ      |
| գագ(ամ)     | կողկողիմ     | պեպպե        |
| դեգադեգ     | կորակոր      | շախշախ(եմ)   |
| դողդող(ամ)  | կցկց(իմ)     | տորտոր       |
| երեր        | հոսհոս(իմ)   | վազվազ(եմ)   |
| զանազան     | ձգձգ(իմ)     | վաղվաղ(եմ)   |
| բաքբաք(ոք)  | ձախձախ(ուս)  | վաշ վաշ      |
| ժիրաժիր     | ձոջձոջ(եմ)   | փափափ(եմ)    |
| լիռլիռ      | ձուզձուզ(իմ) | փողփող(եմ)   |
| խախախ       | մեծամեծ      | փափ(ամ)      |
| խոլխոլ(եմ)  | մոմ(ամ)      | քաքքայ(եմ)   |
| խոսխոս(եմ)  | յեղյեղ(եմ)   | քթքթ(եմ)     |
| ծափծափ(եմ)  | յոյ յոյ      | քրքր(եմ)։    |

Բ. ԴԱՍ

փռանունում (ովհ.)

Ա. եզրը ամբողջ, երկրորդը պակասաւոր.

|                      |    |                        |
|----------------------|----|------------------------|
| խոսուց(իր)           | իր | խոս խոսիր              |
| ծերեւեր              | »  | ծեր և ծեր              |
| հագագ                | »  | հագ հագ (հեղ = ܚܐ ܠܐ)  |
| հակառակ              | »  | հակ առ հակ             |
| հայրայր <sup>1</sup> | »  | հայր հայր              |
| հաստատ <sup>2</sup>  | »  | հաստ հաստ <sup>3</sup> |
| հափափ(եմ)            | »  | հափ հափ                |
| հեծեծ(անք)           | »  | հեծ հեծ                |
| հեկեկ(անք)           | »  | հեկ հեկ                |
| հեղեղ                | »  | հեղ հեղ                |
| հոտ ոտ(եմ)           | »  | հոտ հոտ                |
| յորչորչ(եմ)          | »  | յորչ յորչ              |
| շաղիաղի              | »  | շաղի շաղի              |
| շաղաղ(եմ)            | »  | շաղ շաղ                |
| պատատ                | »  | պատ պատ                |
| սերեր                | »  | սեր և սեր              |
| փարար(եմ)            | »  | փար փար                |
| փարոք                | »  | փար փոք                |

Գ. ԴԱՍ

Առաջինն անխաթալ, երկրորդը խանգարեալ.

|                                           |  |
|-------------------------------------------|--|
| աղիսամաղի                                 |  |
| խառնամառն                                 |  |
| խեղդուեկեղ (ովհ.)                         |  |
| ծակոծուծ                                  |  |
| ծառաւումա (ովհ.)                          |  |
| կարկատեմ (իրք կարկարեմ)                   |  |
| հաստամետ (փոխանակ հաստամաստ ի՛րստ վերեոյ) |  |
| մեղմեխ                                    |  |
| շողմոց                                    |  |
| սարսափ (իրք սոր սար سرس)                  |  |
| սպասպաս (սպաս սպաս)                       |  |
| ցեցամեց                                   |  |
| փաքաք                                     |  |

Յրան. — Այս պատկերի բառերուն մէջ կը դիտուի որ սովորաբար առաջին եզրին առաջին տառը մ ի կը փոխուի կրկնուած պահուն, իսկ հետագային մէջ բոլորովին օտարապաճ կը տեսնենք:

Դ. ԴԱՍ

Առաջինն անփոփոխ, երկրորդը բոլորովին օտարաձայն.

|             |     |              |
|-------------|-----|--------------|
| բարձրաբերձ  | իրք | բարձրաբարձր  |
| դատափետ(եմ) | »   | դատադատ      |
| ծանտաժոտ    | »   | ծանտաժանտ    |
| խաղձախաղձ   | »   | խաղձախաղձ    |
| խեղդունղ    | »   | խեղդունղ     |
| խորտաբորտ   | »   | խորտ ու խորտ |
| ծայրածիր    | »   | ծայրածայր    |
| հատաւարետ   | »   | հատաւահատ    |
| սայրասայր   | »   | սայրասայր    |
| սարսռա      | »   | սար սար      |

Ե. ԴԱՍ

Առաջինը պակասաւոր, երկրորդն ամբողջ.

|                       |
|-----------------------|
| բարախ(եմ) = բախ բախ   |
| դադաք = դար դար       |
| բարախ(եմ) = բախ բախ   |
| բարա = բառ բառ        |
| բորով = բով բով       |
| խաղաղ = խաղ խաղ       |
| խխնչ(եմ) = խնչխնչ(եմ) |
| կակաղ(եմ) = կաղ կաղ   |
| շոշարք = շորք շորք    |
| պապակ = պակ պակ       |
| չերաչերմ = չերմաչերմ  |
| սասան(եմ) = սան սան   |
| տատան(եմ) = տան տան   |
| փափաք = փաք փաք       |

1. Ուրի սեղմաւ ձին է հեթեթ(անդ)ը:

2. Այս բոլոր Պատկերին մէջ, ինչպէս կը տեսնուի, բառին առաջին զերն է միայն պակասած երկրորդին

անցման պահուն, իսկ այս բառին մէջ երկու զեր միանգամայն պակասած են, թէ՛ սկիզբի հ և թէ՛ վերջնիքն ա:

Զ. ԴԱՍ

Առաջինը փոփոխեալ, երկրորդն անփոփոխ.

Աշծա } պիտի == պղծապիտի  
Եշծա }

բարբառ == բառ բառ

բօրափ(եմ) == բուռ == բափ—բափ (եմ)

կայկառ == կառ կառ

աւրձաւ(եմ) == աւտ աւտ

սափաստատ == ստաստատ

Է. ԴԱՍ

Առաջինը խանգարեալ, երկրորդն անխաթար.

Դեղե == դե դե

բերե == բե բե

խդիւայր == խայր խայր

ծիծաղ == ծաղ ծաղ

կասկած == կած կած, կայծ կայծ—էն անց—  
ենրով՝ կարծ կարծ

կոշկոճ == կոճ կոճ

կըկիծ == կծկիծ == կիծ կիծ:

կադա

կեդա

յադա

յեդա

կարծ == կարծակարծ

Ը. ԴԱՍ

Երկու եզրներն ալ տարբեր՝ նոյնիմաստ բառեր որք իբր բարդութիւն ալ կրնան նկատուիլ, մեծաւ մասամբ.

այլազան

բարեկառ

խառնիխառն

խորափոր

հարցափորձ<sup>1</sup>

հեղաձայնակ

յեղափոխ(եմ)

յեղաշրջ(եմ)

24 Սպտ. 1908

Նիւ-Եօքք

Ց. ԹԻՒՆԳԵԱՆ



1. «Հարց»ը «փորձ»ին մէկ տարբեր ձեւն է, և և փ իբար ընդդրեցնելով շատ անգամ հին պարսկերէնի մէջ (հայր = pitar = پدر), իսկ փորձը նոյն իսկ արհ. է, արմատ փորքի ի Տեղա շնորհեր ասկէջ աւելի մանր բաժանութեանց մտնել, աշխատութեան մէջ ընդարձակ խօսուած է այս երեւոյթներու մասին: